ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2013թ. **N-Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշումը `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ քաղաքացի Ռաֆիկ Ազատյանին սեփականության իրավունքով պատկանող, Արզումանյան փողոցի հ.4/1 հասցեում և տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 314.05քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22112012-01-1495 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Հալաբյան փողոցին հարող տարածքում և տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող, 483.15 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22112012-01-1495 վկայական) քաղաքացի Ռաֆիկ Ազատյանին պատկանող՝ Արզումանյան փողոցի հ.4/1 հասցեում և տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 314.05քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Հալաբյան փողոցին հարող տարածքում գտնվող և տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 483.15քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Քաղաքացի Ռաֆիկ Ազատյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասում հողային աշխատանքներն իրականացնելու ժամանակ ստիպված է եղել դադարեցնել շինարարությունը, քանի որ այն առաջացրել է հարակից շենքերի բնակիչների դժգոհությունը: Բնակիչները Ռ.Ազատյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքը ցանկանում են, որպեսզի բարեկարգվի, կանաչապատվի և այնտեղ կազմակերպվի հանգստի գոտի:

Ստեղծված իրավիճակում խնդրի կարգավորման նպատակով քաղաքացու հետ կազմակերպված բազմաթիվ բանակցությունների արդյունքում առաջարկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 314.05քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 483.15քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Փոխանակվող հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2) և 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման սխեմայի գտնվում են 7-րդ գոտում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ